

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Էլեն Սամվելի Ավետիսյանի «Ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունն անգլերենի ուսուցման գործընթացում» ԺԳ. 00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Էլեն Սամվելի Ավետիսյանի «Ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունն անգլերենի ուսուցման գործընթացում» ԺԳ. 00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսությունն անդրադառնում է անգլերենի ուսուցման ընթացքում ավագ դպրոցի աշակերտների մտահանրամշակութային կարողությունների զարգացման կարևոր թեմային, որն արդիական է այսօրվա գլոբալացված աշխարհում, քանի որ արդյունավետ միջմշակութային հաղորդակցությունը կարևոր է անձնական և մասնագիտական տարբեր ոլորտներում հաջողության հասնելու համար:

20-րդ դարի 90-ականների սկզբից գլոբալ աշխարհում օտար լեզուների ուսուցման սոցիալ-մշակութային համատեքստում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել. սկսվել է արտասահմանյան ընկերությունների և ձեռնարկությունների միջև միջազգային հարաբերությունների ինտենսիվ զարգացումը, ինչպես նաև համատեղ կրթական ծրագրերի շրջանակում ուսանողների փոխանակման, միջազգային նախագծերին մասնակցելու ակտիվ ներգրավման հնարավորությունների ընդլայնումը, որոնք հանգեցրին օտար լեզվի և օտար մշակույթի ուսուցման նպատակների, խնդիրների, բովանդակության և տեխնոլոգիաների վերաիմաստավորմանը: Կարիք և խթան առաջացավ ներդնել հանրամշակութային բաղադրիչը օտար լեզվի ուսուցման և դասավանդման գործընթացում, և մշակութային կոմպետենցիան հետզհետե դարձավ օտար լեզվի ուսուցման անքակտելի մասը:

Ինչպես իրավացիորեն նշում է Սվետլանա Տեր-Մինասովան, «միայն դուրս գալով մշակույթի շրջանակներից, այսինքն՝ բախվելով այլ աշխարհայացքի, վերաբերմունքի և այլնի հետ, կարելի է հասկանալ սոցիալական գիտակցության

առանձնահատկությունները և «տեսնել» մշակույթների տարբերությունը կամ բախումը»¹: Ըստ ռուս լեզվաբանի՝ մշակութային պատնեշը շատ ավելի վտանգավոր և տհաճ է, քան լեզվականը, քանի որ մշակութային սխալներն ավելի ցավոտ են ընկալվում, քան լեզվականները և բացասական տպավորություն թողնում շրջապատի վրա:

Այնուամենայնիվ, խոսքը ոչ միայն տհաճության մասին է, այլև անհրաժեշտության՝ կրթության բովանդակությունը հնարավորինս մոտեցնելու կյանքին, այն պահանջներին, որոնք հարկավոր են անհատին ոչ միայն գոյատևելու, այլև հաջողության հասնելու համար:

Եվ, չնայած արդեն շուրջ չորս տասնամյակ լեզվաբանները, մեթոդաբանները ինտենսիվորեն զբաղվում են հանրամշակութային կոմպետենցիայի ուսումնասիրման խնդիրներով, դրանք առայժմ բավարար չեն օտար լեզվի ուսուցման հանրամշակութային հարթությունը լիարժեքորեն ընդգրկելու ուսուցման գործընթացի մեջ այնպես, որ ստեղծվի, ըստ Կլեր Քրամշի, մի այնպիսի համատեքստ, որը կնպաստի ինչպես լեզվի, այնպես էլ մշակույթի ավելի խորն ըմբռնմանը²:

Շատ կարևոր է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում հանրամշակութային տեղեկատվությունը, հանրամշակութային ֆոնը, առանց որոնց անհնար է առհասարակ ձևավորել հաղորդակցական կոմպետենցիան:

Միայն մշակույթն իր տարբեր դրսևորումներով կարող է նպաստել անհատի ձևավորմանը, և դրա մասին խոսել է ռուս ականավոր լեզվաբան Եֆիմ Պասսովը³: Եվ, իսկապես, եթե աշակերտն անցնում է մշակութային որոշակի շերտի միջով, նրան հեշտ է սովորեցնել, նրա հետ հեշտ է հաղորդակցվել: Դրա ապացույցներից է, օրինակ, այն, որ նույնիսկ եթե դու շատ վարժ ես տիրապետում լեզվին, սակայն լավ չես տիրապետում քո պատմությանը, դու չես կարողանա ճշգրիտ թարգմանել

¹ Тер-Минасова С.Г. Язык и межкультурная коммуникация. — М.: Слово/Slovo, 2008. — с.33-34.

² Kramsch C. Context and Culture in Language Teaching. Oxford: Oxford University Press. — 1993.

³ Пассов Е. И. Коммуникативный метод обучения иноязычному говорению : пособие для учителей ин. яз. / Е.И. Пассов. — М. : Просвещение, 1985. — 208 с.

մշակութային տեղեկատվությունը մեկ լեզվից մեկ այլ լեզու: Էլ չխոսենք միջմշակութային երկխոսության մասին, որը դառնում է գրեթե անհնար:

Հարկ է նաև նշել, որ դեռ ոչ շատ վաղ անցյալում հանրամշակութային կոմպետենցիայի փոխարեն օգտագործվում էր «միջմշակութային ըմբռնում» եզրը, սակայն հետագայում այն փոխարինվեց նոր գիտաբառով, որը շատ ավելի լայն է և ենթադրում է ՝ ծրագրային կառուցվածք, ուսումնական պլաններ, ուսուցում, գնահատում և հաշվետվողականություն, ուսուցչական անձնակազմի համապատասխան որակ և մասնագիտական զարգացում, ընտանիք, համայնք, դրա ձևավորման համար անհրաժեշտ աջակցության այլ ռեսուրսներ:

Բոլոր վերը նշվածի ներքո օտար լեզուների մեջ հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորումն այդ կարողության կերտման հարթություններից մեկն է, բայց ոչ միակը, այնուամենայնիվ, օտար լեզվի ուսուցման մեջ այն չափազանց կարևոր է, և միայն ավանդական մեթոդներով լեզվի դասավանդումը բավարար չէ արժեքների, համոզմունքների համալիր իմացություն, վարքագծային օրինաչափություններ ձևավորելու համար⁴:

Այս վերը նկարագրածի համատեքստում Էլեն Մամվելի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսությունը չափազանց կարևոր է մեր օրերում, առհասարակ, և մեր ազգային կրթության բովանդակության համար, մասնավորապես, քանի որ, չնայած արդեն շուրջ երեսուն տարի է անցել խորհրդային մեթոդաբանությունից հետխորհրդային դասավանդման մեթոդաբանություն անցում կատարելուց ի վեր, ներդրվել են նոր մեթոդներ, մոտեցումներ, հայեցակարգեր, կազմակերպվել բազմաթիվ վերապատրաստումներ, սակայն առկա ռեսուրսները, գործիքները, մեթոդաբանությունը դեռևս բավարար չեն հանրամշակութային կոմպետենցիան համալիր ձևով ներմուծելու օտար լեզվի դասավանդման մեթոդաբանության մեջ և ձևավորել այդ կոմպետենցիան բոլոր սովորողների մոտ: Ներկայումս կիրառվող մոտեցումները հատվածական են, չնայած որ 2021 թվականի փետրվարին ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը մշակել և առաջարկել է կիրառել Օտար լեզուների դասավանդման նոր հայեցակարգ, որտեղ ոչ միայն մեծ տեղ է տրվում հաղորդակցական կարողություններին,

⁴ Сафонова В. В. Изучение языков международного общения в контексте диалога культур и цивилизаций. — Воронеж: Истоки, 1996. — 237 с.

հանրամշակութային կոմպետենցիային, այլև յուրաքանչյուր դասարանի համար նկարագրում է, թե ինչպես այն կարելի է ներմուծել հիմնական ծրագրեր հանրակրթական դպրոցներում:

Էլեն Ավետիսյանն առաջարկում է իր ատենախոսության մեջ նոր մեթոդական համակարգ, որը լիովին համահունչ է այդ հայեցակարգին, և հնարավոր է այն կիրառել և արդյունավետորեն փոխել հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման պատկերը ՀՀ կրթական համակարգում:

Ատենախոսական աշխատանքի ներածությունն ստորագծում է հետազոտական թեմայի արդիականությունը՝ շեշտելով հաղորդակցական կոմպետենցիայի կարևորությունը, որը ենթադրում է ոչ միայն լեզվախմացություն, այլև մշակութային, սոցիալական, պատմական, հոգեբանական և հաղորդակցական վարքագծի հայեցակետեր:

Շեղինակն ընդգծում է, որ միջմշակութային կոմպետենցիայի ձևավորումն ու զարգացումը շատ կարևոր են օտար լեզուների ուսուցման համար, քանի որ դրանք աշակերտներին թույլ է տալիս արդյունավետ հաղորդակցվել մշակութային տարբեր համատեքստերում: Այնուամենայնիվ, Է.Ավետիսյանը նշում է դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների մոտ լեզվական անբավարար մակարդակի և հիմնական գիտելիքների պակասի պատճառով, ինչը պահանջում է նրանց մոտ նոր բառապաշարի և մշակութային համատեքստի իրազեկման աստիճանական զարգացում:

Ներածությունը նաև ընդգծում է, թե որքան են կարևոր մշակութային տեղեկատվություն պարունակող տեքստերն աշակերտների ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման համար:

Էլեն Ավետիսյանի հետազոտության նպատակն է՝ լուծել ուսանողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման խնդիրը՝ հաշվի առնելով տեքստերի մշակութային բաղադրիչների և լեզվամշակութային բացերը, ինչպես նաև դրանց կիրառումը անգլերենի դասավանդման մեջ:

Նախ, այսօրվա գլոբալացված աշխարհում, որտեղ տարբեր մշակույթների պատկանող մարդկանց հետ հաղորդակցությունն ու փոխազդեցությունը գնալով ավելի հաճախակի են դառնում, տարբեր մշակութային ենթատեքստերը հասկանալու և կողմնորոշվելու կարողությունը դարձել է չափազանց կարևոր: Միայն

լեզվախմացությունը բավարար չէ տարբեր մշակութային ծագում ունեցող մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու և շփվելու համար: Հետևաբար, հանրամշակութային կոմպետենցիայի զարգացումը, որը ներառում է մշակութային իրազեկում, զգայունության և հարմարվողականության ձևավորում, պահանջում են համապատասխան ուսուցման տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, ձևերի, եղանակների, առանձնահատկությունների համալիր կիրառում, որը պետք է ձևավորի լեզվաբանական, գործնական, հանրամշակութային, տարածաշրջանային գիտելիքների, կարողությունների և հմտությունների, անձնային և հոգեբանական որակների և ընդունակությունների մի մեծ ամբողջություն, որը կօգնի աշակերտին լուծել բազմաթիվ հաղորդակցական խնդիրներ:

Երկրորդ, լեզվի ուսուցումը ոչ միայն բառապաշարի և քերականական կառուցվածքների նոր շարք ձեռք բերելն է, այլև այդ լեզվով խոսող մարդկանց մշակույթը, սոցիալական հարաբերությունները, պատմությունը, մտածելակերպը և հաղորդակցական վարքագծի մոդելները սովորելը: Առանց մշակութային ենթատեքստը հասկանալու, աշակերտների լեզվախմացությունը կարող է սահմանափակվել, և նրանք չեն կարողանա արդյունավետ հաղորդակցվել օտար լեզվով:

Երրորդ, լեզվական և մշակութային բացերը կարող են ստեղծել հաղորդակցության խոչընդոտներ, և ուսանողները դժվարությամբ հասկանան մշակութային համատեքստում օգտագործվող բառերի կամ արտահայտությունների նպատակային նշանակությունը: Մշակութային իրազեկության և զգայունության բացակայությունը կարող է նաև հանգեցնել թյուրիմացության և թյուրըմոտման, ինչը կարող է բացասաբար ազդել հաղորդակցման վրա:

Չորրորդ՝ տեքստերի մշակութային բաղադրիչներն էական դեր են խաղում ուսանողների հանրամշակութային կարողության զարգացման գործում: Գրական և գեղարվեստական տեքստերի միջոցով ուսանողներին ծանոթացնելով տարբեր մշակութային համատեքստերին՝ աշակերտները կարող են ընդլայնել թիրախային մշակույթի, դրա նորմերի, արժեքների և համոզմունքների իրենց պատկերացումները: Հինգերորդ, հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորումն ու զարգացումը կարող է իրականացվել ուսուցման համապատասխան մեթոդների և ռազմավարությունների կիրառման միջոցով, ինչպիսիք են գործաբանական նյութերի

օգտագործումը, մշակութային միջոցառումները և միջմշակութային հաղորդակցությունը խթանող ինտերակտիվ առաջադրանքները:

Ավելին, հեղինակը ներածության մեջ ընդգծում է միջմշակութային և բազմամշակութային կրթության հայեցակարգերի կարևորությունն ավագ դպրոցի աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի մեթոդաբանության մշակման համար:

Ներածությունում նշվում են այն հետազոտությունները, որոնք ուղղված են տեքստերի գործաբանական տեսակետներին, որոնք հիմք են հանդիսանում աշխատանքում ծավալվող քննարկմանը բարձրացված խնդրի շուրջ:

Ատենախոսության մեջ առաջարկված մեթոդաբանությունը՝ օտար լեզուների ուսուցման գործընթացում ավագ դպրոցի սովորողների սոցիալ-մշակութային կարողությունների զարգացման համար, ընդհանուր առմամբ, լավ ուսումնասիրված է և ապահովում է նյութերի ընտրության պահանջների համապարփակ փաթեթ:

Այնուամենայնիվ, թեև մեթոդաբանությունը հիմնավոր է թվում, հեղինակի համար օգտակար կլինեն օրինակներ բերել, թե ինչպես են առաջարկվող նյութերն ու տեխնիկան գործնականում օգտագործվում: Դեպքի ուսումնասիրությունների կամ գործնական օրինակների ընդգրկումը կարող էր օգնել ընթերցողներին ավելի լավ հասկանալ մեթոդաբանությունը և պատկերացնել, թե ինչպես այն կարող է կիրառվել դասարանում:

Ավելին, հեղինակի համար օգտակար կլինեն քննարկել առաջարկվող մեթոդաբանության իրականացման հնարավոր սահմանափակումներն ու մարտահրավերները: Օրինակ, կարող է դժվար լինել բնօրինակ տեքստեր գտնելը, որոնք ստեղծվել են լեզվակիների կողմից, կամ ուսանողներին չեն հետաքրքրում կամ կատարվել է արդյոք ուսումնասիրություն, որի հիման վրա են ընտրվել նյութերը: Այս հնարավոր խնդիրների լուծումը մեթոդաբանությունը կդարձնե ավելի ամուր և գործնական:

Այսպիսով, ներածությունն արդյունավետորեն հաստատում է հետազոտության թեմայի հրատապությունն ու արդիականությունը, շարադրում մեթոդաբանությունը՝ ցույց տալով օտար լեզուների ուսուցման մեջ հանրամշակութային կոմպետենցիայի կարևորությունը և դրա ձևավորման համար

արդյունավետ մեթոդաբանական համակարգի մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

Էլեն Ավետիսյանի աշխատանքը բաղկացած է երկու գլխից, որտեղ քննարկվում են ավագ դպրոցի աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման բովանդակությունը և գործառական բնութագրերը և ավագ դպրոցի աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգը՝ էլնելով դրա արդյունավետությունից:

Գլուխ 1-ում՝ վերնագրված «Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման բովանդակային եվ գործառական առանձնահատկություններ», ներկայացված է ուսանողների հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական բաղադրիչների ակնարկը և քննարկվում է գրական-գեղարվեստական տեքստերի օգտագործումը որպես հանրային մշակութային իրավասության ձևավորման և զարգացման միջոց, խնդիրը: Այստեղ նաև ուսումնասիրվում են ավագ դպրոցի աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները, ինչպես նաև հաղորդակցության ձախողումների հաղթահարման միջմշակութային հեռանկարները:

Այս գլխում հեղինակը քննարկում է ուսանողների հանրային մշակութային իրավասության հիմնական բաղադրիչները՝ կենտրոնանալով մշակույթի զարգացող սահմանման և օտար լեզուների ուսուցման մեջ լեզվի և մշակույթի տարանջատման մարտահրավերների վրա: Հեղինակը նշում է նաև, որ տարբեր մեթոդաբանական դպրոցներ մշակույթը տարբեր կերպ են սահմանում, և որ «մայրենի» հասկացությունն ինքնին ավելի բարդ է դառնում գլոբալացման և բազմամշակութայնության համատեքստում: Է.

Ավետիսյանն ատենախոսության այս գլխում ներկայացնում է օտար լեզուների ուսուցման և ուսուցման մեջ լեզվի և մշակույթի միջև բարդ փոխհարաբերությունների մանրակրկիտ վերլուծություն: Հեղինակը ցույց է տալիս մշակույթի զարգացող բնույթի և մշակութային կոմպետենցիայի դասավանդման մարտահրավերների խորը ըմբռնում: Ատենախոսը նաև օգտակար շրջանակ է կառուցում տարբեր մեթոդաբանական դպրոցներում մշակույթի վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ հասկանալու համար: Ընդհանուր առմամբ, այս գլուխը հիմք է ստեղծում գրական

տեքստերի ավելի կոնկրետ քննարկման և հաջորդ գլխում՝ ուսանողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման և մեթոդաբանական համակարգի ձևավորման հարցում:

Այս գլխում հեղինակը նաև կարևորում է տվյալ մշակույթի մշակութային տեղանքն արտացոլող տեքստերի ընտրությունը, որն օգնում է աշակերտներին հասկանալ լեզվակրի հոգեբանական առանձնահատկությունները:

Է. Ավետիսյանն անդրադառնում է առաձների և ասացվածքների օգտագործմանը՝ որպես միջմշակութային կարողությունները զարգացնելու արժեքավոր միջոցի, և նշում, որ դրանք կարևոր են հանրամշակութային կոմպետենցիան ձևավորելու համար, քանի որ պարունակում են լեզվակրի մշակույթի, ավանդույթների և սովորույթների մասին պատկերացումների որոշակի շերտ: Հարկ է նշել, որ սա այն խնդիրն է, որ դեռ բավարար ուսումնասիրված չէ օտար լեզուների դասավանդման մեթոդաբանության մեջ՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում օտար լեզվի դասավանդման գործընթացում և կարող է հետագայում դառնալ առանձին ուսումնասիրության ուղղություն ատենախոսի համար:

Գլուխ 2-ը՝ վերտառված «Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորում», կենտրոնանում է ավագ դպրոցի աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգի վրա, որը ներառում է անգլերենի բազմամշակութային բառապաշարի ուսուցման ռազմավարությունները, ավագ դպրոցի անգլերենի դասագրքերի բովանդակության հանրամշակութային բաղադրիչը և ձևավորման և վարժությունների համակարգը: Գլուխը ներառում է նաև մեթոդաբանական համակարգի արդյունավետության գնահատման փորձարարական հատվածի նկարագրություն, որը թույլ է տալիս ատենախոսության հեղինակին անել արժեքավոր եզրահանգումներ:

Այսպիսով, ատենախոսության բովանդակությունը, թեման, նպատակը, խնդիրները համապատասխանում են օտար լեզվի ուսուցման մեջ աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորմանը և զարգացմանը: Էլեն Ավետիսյանի հետազոտության գլուխները պարունակում են հանրամշակութային կոմպետենցիայի տարբեր բաղադրիչներ և դրա զարգացման ռազմավարությունների

համապարփակ վերլուծություն՝ մեթոդաբանական համակարգի ներդրման գործնական մոտեցման կիրառմամբ:

Էլեն Սամվելի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության հիմնական արդյունքները և եզրակացությունները պարունակում են գիտական նորույթ, դրանք կարող են զարգացվել հեղինակի կամ այլ հետազոտողների կողմից, իսկ մեթոդաբանական համակարգը կարող է ներդրվել անզլերենի ուսուցման և դասավանդման համակարգում ցանկացած հանրակրթական դպրոցում:

Աշխատանքը տալիս է արժեքավոր եզրակացություններ, որոնք ընդգծում են հայաստանյան համատեքստում անզլերենը որպես օտար լեզու դասավանդելու ամբողջական մոտեցման անհրաժեշտությունը՝ բնագրայնության սկզբունքի ինտենսիվ ներդրմամբ և կիրառմամբ:

Էլեն Ավետիսյանը կարևորում է ավագ դպրոցի աշակերտների համար մշակութային գրագիտության ապահովման անհրաժեշտությունը՝ պնդելով, որ այս գործընթացում վճռորոշ է անհատականության սկզբունքը: Ուսանողներին ծանոթացնելով բնագիր նյութերին, ինչպիսիք են գրական տեքստերը, ֆիլմերը և ակնարկները, նրանք կարող են ավելի լավ հասկանալ և յուրացնել լեզվակիրների ապրելակերպը, սովորույթները, ավանդույթները և կարծրատիպերը: Ատենախոսն ընդգծում է բնագրայնության կարևորությունը, լեզուն հասկացույթների միջոցով ըմբռնելու և յուրացնելու գաղափարը, որոնք ճիշտ են, այժմեական և նորարար:

Եզրակացության մեջ հեղինակն անդրադառնում է նաև լակունաների ուսուցման համար ճիշտ մեթոդների ընտրության և կիրառության խնդրին:

Հեղինակը պնդում է, որ Հայաստանի ավագ դպրոցներում դասավանդման ներկայիս մեթոդաբանությունները հաճախ լեզվական կարողությունները գերադասում են մշակութայինին: Արդյունքում, ուսանողները կարող են չզարգացնել աշխարհի հայեցակարգային պատկերի համապարփակ ըմբռնումը, որն առկա է լեզվակիրների մոտ: Սա կարող է խոչընդոտել տարբեր մշակութային ծագում ունեցող մարդկանց հետ արդյունավետ շփվելու նրանց կարողությանը:

Փաստորեն, ըստ Է.Ավետիսյանի՝ գոյություն ունեցող մեթոդաբանության էական սահմանափակումներից մեկը գործաբանական-մշակութային սխալների բացահայտման և ուղղման վրա կենտրոնացվածության բացակայությունն է: Դա կարող է պայմանավորված լինել խոսութային-ֆունկցիոնալ վերլուծության

յուրացման դժվարությամբ, ինչն էական նշանակություն ունի նման սխալների ուղղման համար: Աշխարհի լեզվական պատկերը, դրա ընկալումը շատ կարևոր են, և հեղինակը նաև իրավացիորեն ընդգծում է անգլերենի դասագրքերում իրական աշխարհի տարածության և սոցիալական տարածության հետ կապված հասկացությունների դասավանդման անհավասարակշռությունը: Ուսումնական ծրագրում առկա այս բացը պետք է շտկվի՝ ապահովելու ուսանողների միջմշակութային կարողությունների ամբողջական զարգացումը:

Հիմք ընդունելով էլեն Սամվելի Ավետիսյանի կողմի կատարած աշխատանքը՝ կարելի է եզրահանգել, որ այն համապարփակ վերլուծություն է և լիովին համապատասխան է ժամանակակից օտար լեզուների դասավանդման և ուսուցման հարացույցին: Այն ընդգծում է մշակութային գրագիտության կարևորությունը, ուսուցման մեթոդաբանության փոփոխության անհրաժեշտությունը և ուսումնական ծրագրում մշակութային տարբեր հայեցակերպերի ընդգրկման կարևորությունը: Վարժությունների առաջարկվող համակարգը խոստումնալից մոտեցում է առաջարկում անգլերեն սովորող ՀՀ ավագ դպրոցի աշակերտների մոտ միջմշակութային կոմպետենցիան զարգացնելու համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ են նոր հետազոտություններ և գործնական ներմուծում՝ այս բացահայտումները հաստատելու և Հայաստանում անգլերենի կրթության փոխակերպման հարցում դրանց ներուժը լիովին իրացնելու համար:

Ատենախոսության սեղմագիրը, գիտական հոդվածները քննարկում են աշխատանքում տեղ գտած բազմաթիվ կարևորագույն խնդիրներ և օրինաչափություններ: Սեղմագիրը կառուցված է առկա նյութին համապատասխան: Դրանում հստակ նշվում են առարկան, ընդգծված է նպատակը, սահմանվում են խնդիրները, իսկ գլուխներում ներկայացվում դրանց հասնելու եղանակները: Սեղմագրում ներկայացված են նաև ամփոփ երկու գլխի և ենթագլուխների սեղմ նկարագրությունը և ձեռքբերումները:

Ատենախոսության թեմայի շուրջ տպագրված բոլոր յոթ հոդվածներն արտացոլում են հետազոտության դրույթները:

Ամենևին չստվերելով ատենախոսի կատարած աշխատանքը, հարկ է նշել, որ աշխատանքում առկա են որոշակի հարցեր, որոնք կարիք ունեն պարզաբանման հեղինակի կողմից, մասնավորապես.

1. Ատենախոսն իր աշխատանքում նշում է, որ կիրառել է հանրամշակութային փաստերի էքստրապոլյացիան որպես հետազոտության մեթոդ: Որպես կանոն, էկստրապոլյացիան օգտագործվում է երերույթներն ընդհանրացնելու և նոր միտումները և զարգացումները կանխագուշակելու համար: Կուզենայի ատենախոսը հիմնավորեր ևս մեկ անգամ այդ մեթոդի կիրառման արդյունքում առաջ եկած երևույթները, դրանց մեկնաբանությունը, ինչպես նաև կանխատեսումները:
2. Հեղինակը նշում է «Մեթոդիստները դեռևս նախորդ դարի կեսերից փորձում են հասկանալ, թե ինչու են ուսուցիչները հնարավորինս խուսափում հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման հիմնախնդրից (Trigger 1998)» /էջ 27/: Էլ ում ի նկատի ունի ատենախոսը, և որոնք են դրանց պատճառները: Կարծում եմ պատճառների վերհանումը լավ հիմք կհանդիսանար ռազմավարությունների ավելի ճշգրիտ ձևավորման և լրացուցիչ ապավույցներ կձեռքբերելու հետազոտական նպատակին հասնելու համար:
3. Ատենախոսը Գլուխ 1-ի եզրակացության մեջ ներկայացնում է մի քանի ընդհանրացումներ՝ առանց դրանք հաստատող կոնկրետ օրինակներ կամ ապացույցներ ներկայացնելու: Օրինակ, հեղինակը պնդում է, որ անգլերեն խոսակցական բառապաշարի ձեռքբերումը կարևոր պայման է ուսանողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման համար, սակայն այս պնդումը հաստատող որևէ բացատրություն կամ ապացույց չկա: Նմանապես, հեղինակը նշում է հաղորդակցության մոտ և հեռավոր գոտիների հետ կապված արտահայտությունների ուսուցման կարևորությունը, սակայն չի բացատրում, թե ինչպես են դրանք արտացոլում լեզվական համայնքի մտածելակերպը, որը պետք է հաշվի առնեն աշակերտները՝ լեզվակիրների հետ հաղորդակցման ընթացքում:
4. 2017 թվականին Հովիկ Վլադիմիրի Բլբույանի կողմից պաշտպանվել է «Մովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդիրն ավագ դպրոցում» ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսությունը, որը նույնպես անդրադառնում է Ձեր կողմից ներկայացված թեմայի հետազոտությանը: Հստակեցրեք, դիտարկել եք արդյոք սույն աշխատանքը Ձեր հետազոտությունը պատրաստելիս, և եթե այո, որոնք են այն դրույթները, որոնք կիրառել եք Ձեր ատենախոսության մեջ: Իսկ եթե չեք անդրադարձել վերոգրյալ ատենախոսությանը, ինչո՞վ է դա պայմանավորված եղել:

Որպես առաջարկություն, կնշեի այն, որ աշխատանքում ներառված հավելվածները կարելի էր վերնագրել, քանի որ վերնագրերը կապահովեին յուրաքանչյուր հավելվածի բովանդակության անմիջական պատկերացումը: Այն նաև կբարձրացներ ատենախոսի պրոֆեսիոնալիզմը, քանի որ վերնագրված հավելվածները ցույց կտային նրա պրոֆեսիոնալիզմի ավելի բարձր մակարդակը և մանրուքների նկատմամբ ուշադրությունը, ինչը կարևոր է ակադեմիական հետազոտություններում: Եվ, ի վերջո, թեկնածուական ատենախոսության հավելվածներին վերնագրեր տալը մեծացնում է փաստաթղթի կազմակերպվածությունը, հստակությունը և մատչելիությունը, որոնք կարևոր են հետազոտական աշխատանքի հեղինակի համար՝ նրա ասելիքը թիրախային ընթերցողին, գիտնականին, մանկավարժին հասցնելու համար:

Աշխատանքում կան նաև վրիպակներ, օրինակներ, խախտվել է գրականության աղբյուրների ներկայացման միանմանությունը, մասնավորապես, մի հեղինակի մոտ տարևթիվը ներկայացված է փակագծերի մեջ, իսկ մյուս տեղում առանց փակագծերի:

1. Grotjahn, R. 2000. Cultural awareness. Routledge encyclopedia of language teaching and learning. M. Byram (ed.). London: Routledge. 159–161. /էջ 144/:
Hall, E.T. & Hall, M.R. (2010) Key concepts: Underlying structures of culture. In J.N. Martin, T.K. Nakayama & L.A. Flores (Eds.) Readings in intercultural communication: Experiences and contexts. (pp. 165-171). USA: The McGraw-Hill Companies, Inc, /էջ 144/:
2. «ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՅԻԱՅԻ», /էջ 2/:
3. «Հիմնական դրույթները արտացոլված են...», էջ 10:

Չնայած ներկայացված դիտարկումներին ատենախոսության որոշ հարցերի վերաբերյալ, դրանք ամենևին էլ չեն նսեմացնում աշխատանքի գիտական և կիրառական արժեքը, և հիմնվելով վերոգրյալի վրա՝ երաշխավորում եմ, որ էլեն Սամվելի Ավետիսյանի՝ «Ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպլեքսային զարգացման ռազմավարությունն անգլերենի ուսուցման գործընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին վերաբերող ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 «Դասավանման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Հյուսիսային համալսարանի ուսումնահետազոտական
և միջազգայնացման գծով պրոռեկտոր,
Եվրոպայի խորհրդի կրթության փորձագետ

բ.գ.դ., պրոֆեսոր



Լուսինե Հրանտի Տլջյան

Հաստատում եմ՝

Հյուսիսային համալսարանի

գիտ. քարտուղար

բ.գ.թ.

Աստղիկ Աշոտի Աբրահամյան